



შეფასებისა და გამომცდების  
ეროვნული ცენტრი

# Թեստ տարրական աստիճանի ուսուցիչների համար

## Մաթեմատիկա

### Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է՝ 53

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսակետից տարատեսակ են: Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

### Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ կնշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր ձեռք չեք բերի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:



# Առարկայական գիտելիք

1.  $m$  և  $n$  այնպիսի բնական թվեր են, որ  $m + 4n$  գույգ է: Ստորև թվարկածներից ո՞րը կարող է լինել կենս:

ա)  $m + 2n$

ბ)  $m + mn$

գ)  $5m + 4n$

դ)  $4m + n$

2. Ընդամենը քանի՞ այնպիսի եռանիշ թիվ է, որը 30-ի կամ 40-ի բազմապատիկն է:

- ա) 44
- ბ) 48
- գ) 50
- դ) 52

3.  $AD$  հատվածի վրա նշված է  $C$  կետն այնպես, որ  $|AC|:|CD| = 2:1$ , իսկ  $AC$  հատվածի վրա նշված է  $B$  կետն այնպես, որ  $|AB|:|BC| = 3:2$ : Ինչի՞նչ է հավասար  $|AB|:|BD|$ :

ս)  $\frac{1}{2}$ -ի,

ծ)  $\frac{2}{3}$ -ի,

ժ)  $\frac{3}{5}$ -ի,

զ)  $\frac{4}{7}$ -ի:

4.  $a$  և  $n$  բնական թվեր են:  $a$ -ն  $n$ -ի վրա բաժանելիս ստացած մնացորդը հավասար է 4-ի, իսկ  $2a$ -ն  $n$ -ի վրա բաժանելիս ստացած մնացորդը հավասար է 3-ի: Ինչի՞նչ է հավասար  $n$ -ն:

- ա) 5-ի,
- բ) 6-ի,
- գ) 7-ի,
- դ) 8-ի:

5. Տուփի մեջ 10 սպիտակ, 10 կարմիր և 10 կանաչ մատիտ է: Առավելագույնը քանի՞ մատիտ կարելի է վերցնել տուփից առանց մեջը նայելու, որպեսզի տուփի մեջ անպայման մնա երեք գույնի գունե 2-ական մատիտ:

- ա) 6
- ბ) 8
- գ) 12
- դ) 22

6. Տրված է դատողություն.

- բոլոր հաջողակ մարզիկները շատ են մարզվում:
- Բոլոր հաջողակ մարզիկները առողջ են սնվում:

Ուրեմն, եթե մարզիկը շատ է մարզվում և առողջ է սնվում, ապա նա հաջողակ է:



*Ստորև տրված դիագրամների վրա կիրառված են հետևյալ նշումները.*

*A – մարզիկների բազմությունը,*

*B – այն մարզիկների բազմությունը, որոնք շատ են մարզվում,*

*C – այն մարզիկների բազմությունը, որոնք առողջ են սնվում,*

*D – հաջողակ մարզիկների բազմությունը:*



*Այս դիագրամներից ո՞րն է ցույց տալիս, որ տրված դատողությունը ճշմարիտ չէ:*

- ս) Միայն I,      ծ) միայն II,      ջ) երկուսն էլ,      Վ) ոչ մեկը:



7.  $x$  և  $y$  այնպիսի թվեր են, որ  $x > 0$ ,  $y < 0$ : Ստորև թվարկածներից ո՞րը կարող է լինել ճշմարիտ:

ա)  $x^2 < y^2$


բ)  $\frac{x}{y} > 1$

գ)  $x - y < -1$

դ)  $x^2 y^3 > 0$

8. ABCD քառակուսու մեջ գտնվող E կետը հատվածներով միացած է քառակուսու գագաթների հետ: AEB եռանկյունը հավասարակողմ է: Ինչի<sup>օ</sup> է հավասար DEC անկյան մեծությունը:

- ա)  $120^\circ$ -ի,
- բ)  $130^\circ$ -ի,
- գ)  $140^\circ$ -ի,
- դ)  $150^\circ$ -ի:




## Տվյալների վերլուծում

Այս կամ այն օբյեկտը մարդն ակնթարթորեն չի կարող ընկալել, այն ճանաչելու համար ժամանակի որոշակի միջակայք (ինտերվալ) է հարկավոր: Արտահայտվեց ենթադրություն, որ գոյություն ունի կապ անհատի ինտելեկտի թեստում ստացած արդյունքի և պատկերը ճանաչելու համար անհրաժեշտ ժամանակի տևողության միջև: Այս ենթադրությունը ստուգելու համար ինտելեկտի թեստում ինչպես բարձր արդյունք ունեցող A անձին, այնպես էլ համեմատաբար ցածր արդյունք ունեցող B անձին, ժամանակի տարբեր տևողության դեպքում ճանաչելու համար ներկայացրեցին 50 տարբեր պարզ պատկեր: Դիագրամի վրա տրված ժամանակի տարբեր տևողության դեպքում ճանաչելու համար ներկայացված պատկերների քանակի քանի՞ տոկոսը ճանաչեցին A և B անձինք:

*Հաջորդ երկու հարցին պատասխանեք այս դիագրամի համաձայն:*

*Անցում հարցերին. [9](#) [10](#)*



9. Այն դեպքում, երբ ներկայացնելու ժամանակի տևողությունը 0,9 վրկ. էր, այն պատկերների քանակը, որոնք ճանաչել չկարողացավ B անձը, քանի՞ անգամ էր գերազանցում այն պատկերների քանակին, որոնք ճանաչել չկարողացավ A անձը:

- ա) 3-անգամ,
- բ) 4-անգամ,
- գ) 5-անգամ,
- դ) 6-անգամ:

[Տեսնել դիագրամը](#)

10. Ներկայացնելու ժամանակի  $n^{\circ}$  տևողության դեպքում է A անձի կողմից ճանաչված պատկերների քանակը 16-ով ավելի B անձի կողմից ճանաչված պատկերների քանակից:

ա) 0,6 վրկ.

ծ) 0,7 վրկ.

ց) 0,8 վրկ.

ղ) 0,9 վրկ.:

[Տեսնել դիագրամը](#)

11. Ցանկացած  $x$  և  $y \neq 0$  թվերի համար  $x * y = \frac{2x-y}{y}$ : Ինչի՞ է հավասար  $1 * (2 * 3)$ :

ս) 3-ի,

ծ) 4-ի,

ժ) 5-ի,

զ) 6-ի:

12. Թվարկաձևերից որի՞ խորանարդին կարող է հավասար լինել 9-ով եզրափակվող քառանիշ թիվը:

ս) 13-ի,

ծ) 19-ի,

ժ) 23-ի,

զ) 29-ի:

13. Լիան, Սալումեն, Թեմուրին և Իլիան ենթադրությունն արեցին պահարանում գրքերի քանակի մասին:

**Լիա.** Պահարանում գրքերի քանակը հավասար է 8-ի կամ 11-ի:

**Սալումե.** Պահարանում գրքերի քանակը 7-ից ավելի է:

**Թեմուրի.** Պահարանում գրքերի քանակը հավասար է 10-ի կամ 12-ի:

**Իլիա.** Պահարանում գրքերի քանակը 13-ից պակաս է:

Նրանցից ճիշտ հայտնվեց միայն մեկ աղջկա և մեկ տղայի ենթադրությունը:

Քանի՞ գիրք էր պահարանում:

ս) 12

ծ) 11

ժ) 10

զ) 9



14. Հարթության վրա տրված է ուղղանկյուն կոորդինատային համակարգ: Հարթության  $K(4; 2)$  կետով անց է կացված  $y$ -առանցքին զուգահեռ ուղիղ:  $A$  և  $B$  կետերը համաչափ են այս ուղղին, իսկ  $B$  և  $C$  կետերը համաչափ են  $x$ -առանցքին: Ինչի՞նչ է հավասար  $C$  կետի կոորդինատների գումարը, եթե  $A$  կետի կոորդինատների գումարը հավասար է 5-ի:

ս)  $(-3)$ -ի,

ծ)  $(-1)$ -ի,

ժ) 3-ի,

զ) 1-ի:

15. Նինոն շաբաթվա սկզբին մի քանի կիլոգրամ խնձոր գնեց, որի համար վճարեց ընդամենը 10 լարի: Շաբաթվա վերջին խնձորը 20%-ով էժանացավ: Այդ պատճառով Նինոն որոշեց 30%-ով ավելի կշռի խնձոր գնել: Քանի՞ լարի պետք է վճարի Նինոն:

- ա) 10,4-ի,
- բ) 10,6-ի,
- գ) 10,8-ի,
- դ) 11-ի:

16. Նինոն, Աննան, Սոփիոն և Թամարը քույրեր են: Նրանց միջին տարիքը, առանց Նինոյի, 8 տարի է, առանց Աննայի՝ 12 տարի է, առանց Սոփիոյի՝ 13 տարի է, իսկ առանց Թամարի՝ 15 տարի է: Քույրերի միջին տարիքն է.

- ա) 10 տարի,
- բ) 11 տարի,
- գ) 12 տարի,
- դ) 13 տարի:

## Տվյալների բավարարում

17. Ճշմարիտ հավասարությունում  $\frac{1 * 3}{2 * 3}$  միանման խորհրդանշաններով նշված են միատեսակ թվանշանները, իսկ տարբեր խորհրդանշաններով՝ տարբերվող թվանշանները:

Տրված է երկու պայման.

I. \* -ով նշված թվանշանը կենտ է:

II. ■ -ով նշված թվանշանը կենտ է:

Պարզելու համար, թե որ թվանշաններն են նշված \* և ■ խորհրդանշաններով.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ბ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:

18.  $a$  և  $b$  ցանկացած թվեր են:

Տրված է երկու պայման.

I.  $a > 2$  և  $b > 6$ :

II.  $a < 4$  և  $b < 3$ :

Պարզելու համար, ճշմարիտ է, թե՛ ոչ  $ab < 12$  անհավասարությունը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:

19. Ուղղանկյուն զուգահեռանիստի հիմքը քառակուսի է:

Տրված է երկու պայման.

I. Ուղղանկյուն զուգահեռանիստի հիմքի պարագիծը հավասար է 12 սմ-ի:

II. Ուղղանկյուն զուգահեռանիստի կողմնային նիստի պարագիծը հավասար է 14 սմ-ի:

Պարզելու համար, թե ինչի<sup>օ</sup> է հավասար ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմանները բավարար չեն:

20.  $m$  բնական թիվ է:

Տրված է երկու պայման.

I.  $\frac{1}{10} < \frac{1}{m} < \frac{1}{4}$ :

II.  $m^2$  գույգ է:

Պարզելու համար, թե ինչի<sup>օ</sup> է հավասար  $m$ -ը.

- ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,
- բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,
- գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,
- դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,
- ե) տրված պայմանները բավարար չեն:

21. Քաղաքապետի ընտրությունների քվեարկությանը մասնակցում էր ընդամենը 3 թեկնածու՝  $A$ ,  $B$  և  $C$ : Ամեն մի ընտրող իր ձայնը տվեց այս թեկնածուներից միայն որևէ մեկին:

Տրված է երկու պայման.

I. Ընտրություններում  $B$ -ին 3-անգամ ավելի ընտրող ձայն տվեց, քան  $C$ -ին:

II. Ընտրություններում  $A$ -ին և  $C$ -ին հավասար քանակի ընտրողներ ձայն տվեցին:

Պարզելու համար, թե  $A$ ,  $B$  և  $C$  թեկնածուներից որևէ մեկին տվե՞ց, թե՛ ոչ իր ձայնը ընտրողների կեսից ավելին.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

զ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

զ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմանները բավարար չեն:



22.  $n$ -ի  $n^{\circ}$  բնական արժեքի համար է  $\frac{3n+55}{n+2}$  արտահայտության արժեքը հավասար բնական թվին:  
Պատասխանը հիմնավորել:

(Առավելագույն միավորը՝ 2)

23. A և B բնակակետերից ժամը 12:00-ին միմյանց հանդիպակաց դուրս եկան երկու հեծանվորդ: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հեծանվորդը ընթանում էին հավասարաչափ արագությամբ: Նրանք միմյանց հանդիպեցին ժամը 12:40-ին և առանց դադարի շարունակեցին ճանապարհը: Առաջին հեծանվորդը B բնակակետ հասավ ժամը 13:12-ին: Ո՞ր ժամին հասավ երկրորդ հեծանվորդը A բնակակետ:

Պատասխանը հիմնավորել:


(Առավելագույն միավորը՝ 3)

24. Ուղղանկյան երկու կողմերի երկարությունների գումարը հավասար է 7 սմ-ի, իսկ երեք կողմերի երկարությունների գումարը՝ 9 սմ-ի: Ինչի՞ է հավասար ուղղանկյան յուրաքանչյուր կողմի երկարությունը:

Պատասխանը հիմնավորել:

(Առավելագույն միավորը՝ 3)

25. Շրջանային դիագրամի վրա տրված է շաբաթվա սկզբին հյուրանոցում գտնվող զբոսաշրջիկների տոկոսային բաշխումն ըստ ազգության: Շաբաթվա վերջին հյուրանոցում գտնվող իսպանացի զբոսաշրջիկների թվաքանակը 2,5-անգամ նվազեց, ֆրանսիացի զբոսաշրջիկներինը՝ 1,6-անգամ ավելացավ, իսկ գերմանացիներինը՝ մնաց անփոփոխ: Այլ ազգության զբոսաշրջիկներ շաբաթվա ընթացքում հյուրանոց չեն մտել: Շաբաթվա վերջին հյուրանոցում մնացած զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի  $n$  թ մասն էր կազմում գերմանացի զբոսաշրջիկների թվաքանակը:



Պատասխանը հիմնավորել:

(Առավելագույն միավորը՝ 3)

26. Ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող ավազանը ջրով լցնել հնարավոր է երկու խողովակով: Միայն առաջին խողովակով ավազանում ջրի մակարդակը յուրաքանչյուր ժամում ավելանում է 30 սմ-ով, միայն երկրորդ խողովակով՝ 20 սմ-ով: Որքա՞ն ժամանակում կլցվի ավազանը միայն առաջին խողովակով, եթե երկու խողովակով ավազանը լցնելու համար հարկավոր է 4 ժամ:

Պատասխանը հիմնավորել:

(Առավելագույն միավորը՝ 3)

27. Վեցերորդ դասարանցի աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Հաշվարկել. I.  $(28028 - 280) : 14$ ,


II.  $(340 \cdot 68) : 17$ :

2) Ութ հարյուր հազար վեց հարյուր ինը որքանո՞վ է ավելի չորս հարյուր տասնյոթից:

3) Գտեք  $x$ , եթե  $x \cdot \frac{4}{9} \cdot \frac{5}{7} = \frac{28}{9}$ :

4) Ուղղանկյունից, որի կողմերի երկարություններն են 16 սմ և 15 սմ, կտրեցին չորս քառակուսի, որոնցից յուրաքանչյուրի կողմի երկարությունն է 6 սմ (տես՝ գծագիրը): Ինչի՞ է հավասար ուղղանկյան մնացած մասի մակերեսը:

5) Հյուրանոցում միայն 1-տեղանոց և 3-տեղանոց համարներ են – ընդամենը 38 համար: Քանի՞ 1-տեղանոց համար է այս հյուրանոցում, եթե տեղերի ընդհանուր քանակը հավասար է 86-ի:



Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1) I.  $(28028 - 280) : 14 = 28028 : 14 - 280 : 14 = 202 - 20 = 182$

II.  $(340 \cdot 68) : 17 = (340 : 17) \cdot (68 : 17) = 20 \cdot 4 = 80$

2)  $609 - 417 = 192$ : Ավելի է 800192-ով:

3)  $x = \frac{28}{9} : \frac{4}{9} \cdot \frac{5}{7} = \frac{28}{9} \cdot \frac{9}{4} \cdot \frac{5}{7} = 7 \cdot \frac{5}{7} = 5$

4)  $15 - 12 = 3$ ,  $16 - 12 = 4$ , մնացած մասի մակերեսն է

$3 \cdot 16 + 4 \cdot 15 + 3 \cdot 4 = 48 + 60 + 12 = 120$  (քառ. սմ):

5) Եթե բոլորը 3- տեղանոց լինեք.  $38 \cdot 3 = 104$  տեղ,

Այդ պատճառով 1-տեղանոց է  $(104 - 86) : 2 = 9$  համար:

- Ցույց տվեք աշակերտի կողմից բաց թողած յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

(Առավելագույն միավորը՝ 4)

# Ակադեմիական հատուրթյուններ



## Ընթերցած տեքստի վերախմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:*

Երկար ժամանակ է վաղ տարիքի երեխաների կողմից սոցիալական նորմերի յուրացման գործընթացը հանդիսանում է հետազոտողների ուշադրության օբյեկտ: Մի քանի տասնյակ տարի առաջ համարում էին, որ մինչև 7 տարեկան տարիքի երեխաները առանց քննադատության, որպես աներեր ճշմարտություն են ընդունում մեծահասակների կողմից առաջարկված նորմերը. այս տարիքի երեխաները կարծում են, որ միայն հեղինակավոր մեծահասակներն իրավունք ունեն արդարացիությունը որոշել և միայն վարքի արդյունքով է գնահատվում այս վարքի բարոյականության աստիճանը: Բայց ժամանակակից հետազոտությունների համաձայն, արդեն նախադպրոցական տարիքում երեխաները գիտակցում են մեր սոցիալական կյանքի նորմերի և կանոնների բազմազանությունը:

Ժամանակակից փորձաքննություններից մեկում 4-7 տարեկան երեխաներին ցույց տվեցին տեսանյութ, որում երեք երեխա խաղում էին: Մի դեպքում խաղի կանոնը սահմանում էր երեխաներից մեկը, իսկ մյուս դեպքում՝ մեծահասակը կամ խաղացողների խումբը միասնաբար: Տեսանյութի ցուցադրության վերջում երեխաներին հարցնում էին, հնարավո՞ր է, թե՛ ոչ տրված դեպքերում փոփոխել կանոնները: Երբ խաղի կանոնը մի երեխա կամ մեծահասակն էր սահմանում, երեխաները կարծում էին, որ այս կանոնը փոխել կարող է միայն այն անձը, ով այն ընդունել է: Այն դեպքում, երբ 6-7 տարեկան երեխաները կարծում էին, որ խմբային համաձայնությամբ ընդունված կանոնը փոխելու իրավունք ոչ ոք չունի, 4-5 տարեկան տարիքի երեխաները գտնում էին, որ ցանկացած երեխա կարող է այս կանոնը փոխել:

Անցնել հարցերին. [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#)

4-7 տարեկան երեխաները նույնպես հասկանում են, որ գոյություն ունեն տարբեր տեսակի կանոններ: Մասնավորապես, նրանք հասկանում են, որ բարոյական նորմերը տարբերվում են պարզ սոցիալական պայմանավորվածություններից: Փորձաքննություններից մեկում տարրական դպրոցի երեխաներին առաջարկում էին տարբեր տեսակի կանոններ, օրինակ ինչպիսին է դպրոցում համազգեստ կրելը, ինչը տիպիկ սոցիալական համաձայնություն է և, նաև այն մասին կանոնը, որ աշակերտները միմյանց հետ չպետք է կռվեն, ինչը տիպիկ բարոյական նորմ է: Այնուհետև երեխաներին հարցնում էին, պարտադիր է, թե՛ ոչ այս կանոնների պահպանումը այն դեպքում, եթե ուսուցիչը որոշի, որ դրանք հարկավոր չէ պահպանել, կամ՝ պետք է տարածվե՞ն, թե՛ ոչ այս կանոնները նաև այլ երկրի երեխաների վրա: Երեխաները ընդունում էին առաջին կանոնը (սոցիալական համաձայնությունը) փոխելու հնարավորությունը, սակայն ոչ մի կերպ չէին զիջում բարոյական նորմը պահպանելու անհրաժեշտությունը:

Այդպիսով այն բանի փոխարեն, որ կուրորեն ընդունեն մեծերի կողմից առաջարկված նորմերը, վաղ տարիքի երեխաները կարող են ակտիվորեն մասնակցել կանոնների ձևակերպմանը և մեկնաբանությանը: Համապատասխանաբար, սոցիալական աշխարհի կանոնների ուսումնասիրության գործընթացը՝ փողոց չէ, որի վրա միակողմանի երթևեկություն է և միայն մեծահասակներն են սովորեցնում երեխաներին:

Անցնել հարցերին. [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#)

**28.** Առաջին պարբերությունում ներկայացված կարծիքների համաձայն, մինչև 7 տարեկան տարիքի երեխաները առանց քննադատության, որպես անսասան ճշմարտություն են ընդունում մեծահասակների կողմից առաջարկված նորմերը: Ի՞նչ առնչություն կա այս կարծիքի և երրորդ պարբերությունում ներկայացված հետազոտության արդյունքի միջև:

Երրորդ պարբերությունում ներկայացված հետազոտության արդյունքը

- ա) հաստատում է այս կարծիքը,
- ծ) կասկածի տակ է դնում այս կարծիքը,
- ց) այս կարծիքը չի կիրառվի ո՛չ այս կարծիքը հաստատելու, ո՛չ էլ չեղարկելու համար,
- Պ) կարելի է քննարկել որպես այս կարծիքի պատկերազարդման օրինակ :

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

29. Երկրորդ պարբերությունում նկարագրված փորձաքննության հիման վրա կարելի է եզրակացնել, որ 4-7 տարեկան երեխաները.

ա) գտնում են, որ միայն խաղի կանոնների հեղինակն իրավունք ունի փոփոխել կանոնները,

բ) չեն քննարկում այն կանոնների փոփոխման հնարավորությունը, որոնք մշակվել են մեծահասակների կողմից,

գ) խմբի կողմից մշակված կանոնները քննարկում են որպես աներեր ճշմարտություն,

դ) քննարկում են կանոնների փոփոխման հնարավորությունը այն բանի համաձայն, թե ում կողմից են դրանք մշակված:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

30. Ստորև թվարկածներից, ո՞ր ենթադրությունն ընդունելու հիմք է տալիս երրորդ պարբերությունում նկարագրված հետազոտության արդյունքը:

4-7 տարեկան երեխաները արդեն հասկանում են, որ.

- ճ) գոյություն ունեն կանոններ, որոնց միասնաբար մշակումը և, համապատասխանաբար, պահպանումը պարտադիր է,
- Ն) գոյություն ունեն կանոններ, որոնց պահպանումը այնքան կարևոր է, որ դրանց փոփոխումը առանձին մարդու կամքից չի կախված,
- Ը) ուսուցիչն իրավունք չունի որոշել, որ կանոնը պետք է պահպանեն երեխաները՝ բարոյական նո՞րմը, թե՞ սոցիալական համաձայնությունը,
- Թ) երեխաներն անձամբ իրավունք ունեն որոշել, որ կանոնի պահպանումն է կարևոր՝ բարոյական նորմի՞, թե՞ սոցիալական համաձայնության:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

**31.** Բարոյական զարգացումն ուսումնասիրող դասական փորձաքննություններից մեկում վաղ տարիքի երեխաներին ցույց էին տալիս երկու ֆիլմ: Մի ֆիլմում պատկերված էր երեխա, որը պատահաբար բախվեց սեղանին և կոտրվեց մի քանի բաժակ, իսկ երկրորդ ֆիլմում՝ երեխա, որը մտածված կոտրեց բաժակը: Հարցմանը մասնակցած երեխաների մեծամասնությունը այն հարցին, թե ո՞ր երեխան վարվեց ավելի վատ, պատասխանում էր, որ առաջինը, որովհետև նա ավելի շատ բաժակ կոտրեց:

Ո՞ր պարբերությունում տրված տեղեկատվությանն է կապվում նկարագրված փորձաքննության արդյունքը:

- ա) Առաջինում
- ծ) Երկրորդում
- ց) Երրորդում
- զ) Չորրորդում

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

32. Ստորև թվարկածներից ո՞րն է վերջին պարբերությունում տրված նախադասության արդարացի մեկնաբանությունը՝ սա փողոց չէ, որի վրա միակողմանի երթևեկություն է:

ա) Երեխաներն անկախ սահմանում են խաղի կանոնները սոցիալական միջավայրում,

ծ) մեծահասակները առավել պատասխանատվությամբ պետք է մոտենան երեխաներին կանոններ առաջարկելու գործընթացին,

զ) երեխաների կողմից սոցիալական աշխարհում կանոնների ուսումնասիրման գործընթացը առավել արդյունավետ է, եթե այն բազմակողմանի է,

զ) մեծահասակների կողմից առաջարկված կանոնների յուրացումը՝ երեխաների կողմից այս կանոնները ակտիվորեն հասկանալու գործընթաց է:


[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)



### 33. Վերլուծական գիր

Աշակերտների երկխոսությունը սոցիալական ցանցից.

- «Լևան, այսօր հո՞ լուծեցիր այն խնդիրը, որի համար նկատողություն էր անում, չհասկացա, որևէ սխա՞լ էիր թույլ տվել:
- Ո՛չ, այլ ճանապարհով լուծեցի և պատասխանն էլ ճիշտ ստացա, բայց սկսեց վիճել այն պատճառով, որ «ես ինչպես սովորեցրեցի, այնպես ինչու չես լուծել»:
- Դու էլ ինչ ես օրիգինալություն անում, լուծիր այն ճանապարհով, որը սովորեցրել է »:

Հատված հոդվածից.

«Աշխարհը ճանաչելու, նրա էությունը բացատրելու համար եթե միայն մեկ գործիք կիրառեք, արդյունքն էլ ոչլրիվ, միակողմանի կլինի: Ընդհանրապես, ցանկացած հարցի տարբեր ռակուրսով (հեռանկարային դիրքով) ընկալումը մեծացնում է մի կողմից հնարավորությունները, մյուս կողմից լրիվ պատկերը ստանալու հավանականությունը»:

Մտածեք աշակերտների երկխոսության, հոդվածից բերված հատվածի մասին և դատողություն արեք.

- Ի՞նչ հիմնախնդիր է բացահայտվում տրված պատկերավորման նյութում:
- Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնեցնում այս հիմնախնդիրը ուսման-ուսուցման գործընթացում:
- Ի՞նչը կարող ենք դիտարկել որպես հիմնախնդրի լուծման ճանապարհ: Ընդհանրացրեք ասելիքը:

*Դատողության ամրապնդման համար բերեք փաստարկներ և օրինակներ:*

*Ձեր կողմից գրված փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 100 բառ:*

*(Առավելագույն միավորը 9)*